


**Հանրային ջրեր :** — Ինչպէս որ յայտնի է՝ ջուրը բնութեամբ ոչ երբէք բոլորովին պարզ կը գտնուի, հապա միշտ մէջը լուծուած նիւթեր կ'ըլլան. հասարակ ջրերու մէջ աս լուծուած նիւթերուն քանակը միշտ նոյնչափ չէ, հապա մէկուն մէջ աւելի՝ մէկուն մէջ պակաս, բայց ընդհանրապէս միշտ անզգալի : Կան նաև ան տեսակ ջրեր, որոնց մէջ աս լուծուած նիւթերուն քանակը աւելի առատ է, և մասնաւոր նիւթեր կը գտնուին մէջը. ան պատճառաւ նաև մասնաւոր յատկութիւններ ունին, ու հանրային ջուր՝ կ'ըսուին : Եւ ջրերուն մէջ սովորաբար գտնուած նիւթերն են ածխային թրթու, ջրածծմբային թթու, երկրթի ծծմբակ, փոթասի ծծմբակ, մանեզիայի ծծմբակ, կրի ածխակ ու ծծրմբակ և այլն. բայց այլ և այլ տեղուանք հանքային ջրերուն մէջի նիւթոց տեսակն ու քանակն ալ կերպ կերպ կ'ըլլան :

**Չէրճէի ջրեր :** — Չէրճէի ջրերը առանց վեր ցատքելու գետնին երեսէն կը բղխին ու սովորաբար չափաւոր, շատ անգամ ալ սաստիկ տաք կ'ըլլան, ան պատճառաւ է որ Չէրճէի ջուր՝ կ'ըսուին : Իսլանտիա կղզւոյն մէջ Չէրճէի ջրերը ան աստիճանի տաքութիւնն ունին, որ անոնց մէջ եթէ գայլախազ ըսուած քարը ձգելու ըլլաս՝ կը լուծուի, ու յատակը կը նստի : Իաղղիայի մէջ Շոտ-զէկ ըսուած Չէրճէիներուն մօտի բնակիչները նոյն ջրերը գետնափոր ջրանցքներով իրենց տանը յատակին տակը կը բերեն, ու անանկով ձմեռը տներնին կը տաքցընեն. նմանապէս նոյն ջրով կերակուրնին ալ կը տաքցընեն :

Չէրճէի ջրերուն տաքութեան պատճառը որոշ չգիտցուիր. ոմանք կ'ըսեն թէ հրաբուխներն են պատճառը. վասն զի աս ջրերէն շատերուն աղբերակունքը հրաբուխներու մօտ

կը գտնուին. խիստ հաւանական է թէ հրաբուխին տաքութեամբը նոյն ջրերն ալ ան աստիճանի տաքնան. բայց շատ Չէրճէիներ ալ կան այնպիսի երկիրներու մէջ՝ ուր որ ամենեւին հրաբուխի նշան չկայ : Եւ որոնց ալ պատճառը կրնան հրաբուխներն ըլլալ՝ թէ որ ըսենք թէ ան ջրերը խիստ հեռուէն գալով ու հրաբուխի մօտերէն անցնելով՝ ինչուան հոն տեղուանքը կը հասնին :

Հ. Տ. Թ.



ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ինտեանական գիտելիք :

Ինչո՞ւ համար գինետան մէջ քանի որ գինին խմորման մէջ է, հոն ճրագը չկրնար վառած մնալ ու կը մարի .

— Եւ ասն զի գինիէն ելած շոգին բոլոր գինետան մթնոլորտը բռնած ըլլալով, հոն ոչ կրակ կը դիմանայ և ոչ մարդ. անանկ որ եթէ մարդ մը գինին խմորելու ատեն երթայ քիթը տակաւին ծակին բռնէ, անոր շոգին քիթը երթալով՝ մէկէն հոն կը մեռնի կայծակէ զարնուածի պէս :

Ինչո՞ւ համար ցուրտ ատեն կրակը աւելի կը բորբոքի ու փայլուն կ'ըլլայ .

— Եւ ասն զի ցուրտ ատեն օդը սաստիկ խիտ ըլլալով, աւելի սնունդ կուտայ կրակին :

Ինչո՞ւ համար ամառ ատեն կրակաբանին մէջ կրակ լեցուցած արևուն դիմացը դնես նէ՛ կը մարի .

— Եւ ասն զի արևուն տաքութենէն ընդարձակած ու անգայտացած օդը կրակին վրայ ազդելով, բաւական սնունդ չտար զինքը վառ պահելու :

Ինչո՞ւ վառարանի մը բոլոր դռներն ու ծակերը գոցես նէ՛ մէջի կրակը կը մարի .

— Եւ ասն զի կրակին չորս դին պատած օդը բաւական չէ զինքը վառ պահելու. որովհետև վառարանին

1 Գ.՝ Eaux minerales.  
2 Գ.՝ Eaux thermales.

մէջ որչափ իրեն յարմար կազ կայ՝ ան ծծելէն ետև , երբոր ուրիշ իրեն ուզած կազը չգտներ՝ կը մարի . անոր համար պէտք է միշտ օդ բանի , որպէս զի նորնոր սնունդ առնելով վառ մնայ .

— 1) անս զի շունչը կը ցրուէ բոցին մասունքները , ու կրակը կը բաժնէ ճրագէն որ սնունդ չկրնար առնել . թէ որ փչումը չափաւոր ըլլայ , բոցը նորէն սնունդ կ'առնէ :

— 2) անս զի շունչը փայտի կտորէ կայծեր կ'ելլեն , և շատ անգամ սաստիկ ձայնով կը ճաթըռտին :

— 3) անս զի փայտին մէջ օդ ըլլալով , երբոր ան օդը տաքութիւն կը տեսնէ՝ կ'ընդարձակի , ու կ'ուզէ բռնութեամբ դուրս ելլել . և ելլելու ատեն ան ծակերուն մէջ որչափ ածուխ դարձած փայտի մանրութներ որ գտնէ՝ զանոնք ալ մէկտեղ դուրս կը ցատքեցընէ :

— 4) անս զի համար ամանով ջուրը կրակի վրայ դնես նէ , տաքնալէն առաջ կը սկսին ջրին երեսը պղպղակներ ելլել :

— 5) անս զի ջուրը , ինչպէս նաև ուրիշ նիւթեր , օդ ունին . ան օդը տաքութենէն կը սկսի ընդարձակիլ և ուժով վեր ելլել :

— 6) անս զի փայտին ու աշնան գեղեցիկ օրերուն մէջ դաշտերը խոնաւութիւն շատ կ'ունենան .

— 7) անս զի ցորեկուան տաքութիւնը գետնէն անդադար շոգի վեր կը հանէ . արևուն մտնելու ատենը երբոր օդը կը սկսի պազիլ , շոգին խրտանալով բարակ անձրևի պէս կը սկսի վար իջնալ :

— 8) անս զի համար գարնան ու աշնան գեղեցիկ գիշերները անցնելէն ետև , առաւօտանց կը տեսնես որ բոյսերն ու ծառերուն տերևները ջրի կաթիլներով լեցուեր են .

— 9) անս զի ցորեկուան մէջ գետնէն ելած շոգիները վեր բարձրանա-

լով , գիշերը օդին պաղութենէն կը խտանան , ու իրենց ծանրութեամբը վար կ'իջնան , և բաց օդի մէջ կեցած ինչ մարմին որ գտնեն՝ վրան կը նստին . ասոնք ալ կ'ըսուին ցօղ :

— 10) անս զի համար սաստիկ քամի եղած ատենը թէպէտ և օդը գեղեցիկ ըլլայ , վրանիս ցօղ չիջնար .

— 11) անս զի քամիով շոգին կը ցրուի ու չկրնար խտանալ :

— 12) անս զի պարզ գիշերներ երբեմն դաշտերը ճերմակ ջրի կաթիլներով կը ծածկուին .

— 13) անս զի օդը պարզ եղած ատենը երբոր ցուրտը վրայ կը հասնի , ցօղին կաթիլները կը սկսին սառիլ , ու անանկ վար կ'իջնան . և ասիկայ կ'ըսուի եղեմն :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

ԹԵՐՈՂՈՒՆ մը կայ սքանչելի ,  
Ոչ բոյն ունի ոչ դագար ,  
Փետուր չունի ոտք չունի  
Ու կը թըռչի անդադար :  
Դանդաղ թըմրած կ'երևնայ ,  
Բայց անանկ շուտ կը սահի  
Որ մէկ թըռչուն մը չըկայ  
Որ իր ետևէն հասնի :  
Այնչափ գէր ու խոշոր է  
Որ դուն բընաւ չես կարծեր .  
Վըրան աս բանս ալ նոր է  
Որ միշտ արև է ու ստուեր :  
Աս ալ ըսեմ որ ճանչնաս .  
Հետը ծառայ մըն ալ կայ  
Որ իր քովէն անպակաս  
Հետը կ'ընէ միշտ ճամբայ :

ՅՈՒԼԻՍԻ ՀԱՆԵԼՈՒԿԵ ԷՐ ՓՈՒՌՈՒ :